

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
СООБЩЕНИЯ

Ժ. Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՔՅԱԹԻՐ ՉԵԼԵՐԻ «ՅԵԶԼԵՔԵ»-Ն ԵՐԵՄԻԱ ՔՅՈՄՈՒՐՃՅԱՆԻ
«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌՈՏ ԴՃ (400) ՏԱՐԻՈՅ ՕՍՄԱՆՑՈՅ
ԹԱԳԱՒՈՐԱՑ»-Ի ԱՂԲՅՈՒՐ

Երեմիա Քյոմուրճյանը (1637—1695) XVII դ. հայ մշակույթի երախտավորներից է՝ Մեզ հասած նրա ստեղծագործական ժառանգությունը ժանրային առումով բազմազան մի հավաքածու է՝ ողբեր, ներբողներ, դանձեր, հիշատակագրություններ, թղթեր, երկլեզվյան բանաստեղծություններ, աշխարհագրական ու պատմական բնույթի գործեր, թարգմանություններ։

Գրական այս հարուստ ժառանգությունը մեզ է ներկայացնում մի քանի լեզուների ծանոթ, իր հարազատ ժողովրդի հին ու ժամանակակից մատենագրությանը, նրա, ինչպես և թուրքերի պատմությանը քաջատեղյակ Ե. Քյոմուրճյան պատմիչին, բանաստեղծին, մտավորականին ու հասարակական գործչին, որը, ինչպես նկատել է Լեոն, «Էրեւ է իր մեջ նոր ժամանակների, հմրուպական հասկացողությամբ, գրական ճաշակ և պահանջներ» և որի «ստեղծագործությունների մեջ կարելի է փնտրել ապագա հայ առօրյա հրապարակախոսության բողբոջները»¹։

Այս բազմավաստակ մշակի պատմական ստեղծագործություններից առանձնապես արժեքավոր է «Պատմութիւն համառօտ ԴՃ (400) տար-

¹ Ե. Քյոմուրճյանի կենսագրության մասին մանրամասնությունները տե՛ս հետևյալ աշխատություններում՝ Զ. Սահակյան, Երեմիա Քյոմուրճյան, Երևան, 1964; Վ. Թորգոմեան, Երեմիա Չէլէպի Քեօմիւրճեան, «Մտամպօրոյ պատմութիւն», Ա, Վիեննա, 1913; Ե. Ալիևեան, Երեմիա Չէլէպի Քյոմուրճեան, Կիսնքն ու գործունեութիւնը, Վիեննա, 1933; Ս. Նշանեան, Օրագրութիւն Երեմիա Չէլէպի Քէօմիւրճեանի, Երուսաղէմ, 1939 և այլն։

² Լեո, Հայոց պատմություն, հատ. 3, Ա գիրք, Երևան, 1969, էջ 358—359։

ւոյ օսմանցոց թագաւորաց» երկը³, որը դեռևս ձեռագիր վիճակում է և Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում ունի № 1675 գրանցումը⁴: Հիշյալ ձեռագիրը Քյոմուրճյանի «Պատմութիւն համառօտ...»-ի միակ ընդօրինականութիւնն է⁵, կատարված 1731—1732 թթ. Գալիպոլցի հաշվողի կողմից: Գրիչ հաշվոն այդ առթիվ ձեռագրի 13ա և 17ա էջերում թողել է երկու հիշատակարան:

Քյոմուրճյանը «Պատմութիւն համառօտը...»-ը սկսել է գրել 1675 թ.⁶ և ավարտել է 1678 թ. Զատիկի տոներին⁷: Այն շարադրված է չափածո և բաղկացած է 1810 քառյակից: Ցուրարանյուր քառյակ կազմով է երկու խառը՝ 7—8 (15) և 8—8 (16) վանկանի երկատողերից: Քառյակում որպէս կանոն հանգավորվում են երկատողերը, այսինքն քառյակի զույգ տողերը՝ 2-րդը և 4-րդը: Հազվադեպ են 1-ին, 2-րդ,

³ Ձեռագիրը երբեմն գրավել է ուսումնասիրողների ուշադրութիւնը: Լ. Անասյանը «Հայկական աղբյուրները Քյուզանդիայի մասին» գրքի հավելվածում հրատարակել է «Պատմութիւն համառօտ...»-ի 4. Պոլսի անկումը նկարագրող հատվածը (37ա—41ա), որպէս մի առանձին ողբ (Լ. Անասյան, Հայկական աղբյուրները Քյուզանդիայի մասին, Երևան, 1957, էջ 82—84): Մ. Զուլպյանը ջալալիների շարժմանը նվիրված իր աշխատեւթյամբ «Պատմութիւն համառօտ...»-ի որոշ նյութեր գրել է գիտական շրջանառութիւն մեջ (Մ. Զուլպյան, Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրութիւն մեջ, Երևան, 1966, էջ 165, 185): Լ. Սահակյանը գնահատել է Ե. Քյոմուրճյանի պատմութիւնը գրական ու գեղարվեստական արժանիքները (Լ. Սահակյան, Երեմիա Քյոմուրճյան, էջ 45—51):

⁴ Ձեռագիրը իր 227 թերթերում («Պատմութիւն համառօտ...»-ը 3ա—174ա էջերում է) բովանդակում է նաև Քյոմուրճյանի «Պատմութիւն Ստամպոլու», «Այլ իմն բան հրէի կնոջն Քէրային» գործերը, Քյոմուրճյանի եղբոր՝ Կոմիտասի, հիշատակարանը՝ գրված 1697 թ., ու հայատառ թուրքերեն մի վիճակախաղ:

⁵ «Պատմութիւն համառօտ...»-ի հեղինակային ինքնագիրը կորել է: Լ. Սահակյանը Քյուրճյանցաբար որպէս նրա երկրորդ օրինակ է հիշատակել Ս. Սյուրմեյանի ձեռագրացուցակից № 14 ձեռագրի «Պատմութիւն օսմաննեան թագաւորաց» յօրինուած Հաճի հաւֆա կոչուած Քեմաթի Զէլլաիէն» գործը (տե՛ս Լ. Սահակյան, նշվ. աշխ., էջ 46, 167): Սակայն հիշյալ երկը, ինչպէս խորագիրն է հուշում և Սյուրմեյանի ձեռագրացուցակում բերված գրչի հիշատակարանն է հաստատում, XVII դ. թուրք պատմագիր Քյաթիր Զեյնեբիի «Թէօհֆէթ իւլ քիպար ֆի էֆսար իւլ պուհար» (Ընծայ մեծամեծաց յօրում են ծանուցմունք ծովոց) աշխատութիւնն է, որը 1765 թ. Երուսաղեմի Հակոբյանց վանքի միաբան Հովհաննես վրդ. Կեսարացիին հայատառի է փոխարկել «գի մերայնոց գիրքին լիցի ընթերցումն» (տե՛ս Ն. Էպ. Պաղարեան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Ցակոբեանց, Երուսաղէմ, հ. 1, № 14, էջ 92—95: Հմմտ. Ս. Սյուրմեյան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Երուսաղէմի Ս. Ցակոբեանց վանքի, հատ. 1, № 14, էջ 101—103):

⁶ Ձեռ., էջ 171ա:

⁷ Ձեռ., էջ 174ա:

4-րդ⁸ և 2-րդ, 3-րդ, 4-րդ⁹ տողերով հանգավորված քառյակները: Հանգ է կազմում «հալ» դերբայական վերջավորությունը:

Պատմության ժամանակագրությունը տրվում է հայկական և հիշ-րեթի թվարկությամբ: Այսպես. 1. Օսման I-ից մինչև սուլթան Սելիմ I-ի գահակալությունը (1512) գրված է հիշրի թվարկությամբ (4ա—56ա), 2. Սելիմ I-ից մինչև սուլթան Մուհամմեդ III-ի գահակալության տարին (1595)⁸ հայկական թվարկությամբ (56ա—83ա), 3. սուլթան Մուհամմեդ III-ից մինչև սուլթան Մուհամմեդ IV-ի գահակալությունը (1648) հիշրի թվարկությամբ (83ա—139բ), 4. 1648—1678 թթ. երեսուն տարվա պատմությունը՝ հայկական թվարկությամբ:

Քյոմուրճյանի «Պատմութիւն համառօտ...»-ը իր 19 գլուխներում ընդգրկում է օսմանյան 19 սուլթաններին՝ Օսման I-ից (XIII դ.) մինչև սուլթան Մուհամմեդ IV-ի (1648—1687 թթ.) գահակալության երեսուն-երորդ տարին (1678) հասնող, «մերձ շորս հարիւր ամաց» օսմանյան Թուրքիայի պատմությունը: Օսման I-ից մինչև 1648 թ. ժամանակաշրջանի պատմությունը Քյոմուրճյանը գրել է հայկական և առավելապես թուրքական սկզբնաղբյուրների օգնությամբ, իսկ 1648 թ.—1678 թ. երեսուն տարվա պատմությունը նա շարագրել է որպես ականատես, նկարագրել է իր տեսածն ու լսածը: Հետևաբար, խնդրո առարկա պատմությունը բաժանվում է տարարժեք երկու ընդհանուր մասերի:

Մենք նպատակ չունենք այստեղ համակողմանիորեն նկարագրել կամ արժեքավորել «Պատմութիւն համառօտ»-ը, այլ մեր խնդիրն է մասնակիորեն անդրադառնալ այդ ստեղծագործության թուրքական սկզբնաղբյուրների հարցին և բացահայտել Քյաթիբ Չելեբիի «Ֆեղլեթ» պատմական գործի հետ Քյոմուրճյանի «Պատմութիւն համառօտ...»-ի ունեցած առնչությունը:

Քյոմուրճյանը, ինչպես նշեցինք վերևում, իր երկի առաջին բաժինը շարագրելիս օգտագործել է թուրքական սկզբնաղբյուրներ, սակայն չի վկայակոչել օգտագործված և ոչ մեկ աղբյուր հանվան: Մերթընդմերթ միայն նա նշում է, որ օգտագործել է թուրքալեզու հեղինակներից՝

Հակիրճ ճառիւք զորս ի տաճկաց

Ըստ կարի իմում եմ թարգմանեալ¹⁰:

⁸ Ձեռ., էջ 163ա:

¹⁰ Ձեռ., էջ 5ա:

⁹ Ձեռ., էջ 167ա:

կամ՝

Ըզտաճկաց վիպօղս հարցի,
Պայազդիտիս սուլթան կոչեալ¹¹։

1402 թ. Անկարայի ճակատամարտից հետո գերեվարված սուլթան Բայազիդ I-ի և հաղթական Լենկ-Թեմուրի միջև հայտնի երկխոսությունը հյուանիս Քյոմուրճյանը գրում է՝

Թումայ րաբունն զորմէ պատմէ
Զայլ իմն զգործիսն ոչ է լուեալ.
Պարսիկ տաճիկ մարք արաբիկ,
Իւրաքանչիւր ըստ ուրոյն այնմ վիպեալ¹²։

Իսկ մեկ այլ առիթով ընթերցողի ներողամտությունը հայցելով, հիշում է՝

Ըզպատմագիրս որպէս գտի,
Հիբար ըստ իմում շափութեբեալ.
Որ զյաճախից փոյթ ոչ կալայ,
Զայսքան վաստակն իմ դու ընկալ¹³։

Քյոմուրճյանը մեկ անգամ էլ, թուրքական աղբյուրները նկատի ունենալով, օգտագործել է Քրստ ոմանց ասի» արտահայտությունը¹⁴։

Այսպիսով, վերոհիշյալ ակնկալությունները, պատմության մեջ եղած հայատառ թուրքերեն հատվածները՝ տարագիր Ճեմ Սուլթանի նամակը ուղղված եղբորը՝ Բայազիդ II-ին (42 քառյակ)¹⁵, Շահ-Աբրասի արշավանքի պատճառով Ստամբուլում բանտարկված նրա պատգամավոր Ահմեդ խանի «սրտի գանգատը»¹⁶, 33ա, 39ա, 95բ, 131բ էջերի թուրքերեն քառյակները, թուրքերեն բառերի անսահման առատությունը, ինչպես և ուսումնասիրությունը հաստատում են, որ Քյոմուրճյանը «Պատմութիւն համառօտ...»-ը գրելիս օգտագործել է մեծ մասամբ թուրքալեզու աղբյուրներ։

Սկզբնաղբյուրների մասին ուղեցույց տեղեկություն է տալիս երկի խորագրին անմիջապես հաջորդող հետևյալ հիշատակությունը. «Հա-

¹¹ Զեռ., էջ 13բ։

¹² Զեռ., էջ 21ա—21բ։

¹³ Զեռ., էջ 33ա։

¹⁴ Զեռ., էջ 50բ։

¹⁵ Զեռ., էջ 47բ—50բ։

¹⁶ Զեռ., էջ 90ա—90բ։

մառոտեալ ի սուլթան Օսմանայ մինչև սուլթան Սէլիմ (Սելիմ I, 1512—1520) տաճիկ թուականօք, ի սուլթան Սէլիմէ մինչև ցսուլթան Մուհամէտ (Մուհամմեդ III, 1595—1603) հայոց թուականօք, ի սուլթան Մուհամէտէ տէ մինչև այս սուլթան Մուհամէտիս (Մուհամմեդ IV, 1648—1687 թթ.) ճուլուն¹⁷ տաճիկ թուականօք¹⁸։ Հիշատակարանի «Թելադրանքով» «տաճիկ թուականօք» գրված մասերի աղբյուրները փնտրեցինք թուրքալեզու պատմական գրականության մեջ, «հայոց թուականօք» մասերի աղբյուրները՝ հայկական։ Թուրքական աղբյուրների հետ կատարված համեմատությունները հանգեցրին այն փաստին, որ Քյոմուրճյանի «Պատմութիւն համառօտ...»-ի բազմաթիվ թուրքական սկզբնաղբյուրների թվում է նաև XVII դ. թուրքական պատմագրության ամենահեղինակավոր ներկայացուցիչ՝ Քյաթիր Չելեբիի «Ֆեզլեբե» երկհատոր պատմական երկը¹⁹։

Քյաթիր Չելեբիի «Ֆեզլեբե»-ն ամփոփում է 1592—1654 թթ. Թուրքիայի պատմությունը։ Նրա առաջին հատորն ընդգրկում է 1592—1621 թթ. ժամանակաշրջանի իրադարձությունները և շարադրված է թուրք պատմագիրների Հասան Բեյլադեի, Իբրահիմ Փեչլեիի և ուրիշների պատմական երկերի հիմքի վրա²⁰։ Երկրորդ հատորը ամփոփում է 1621—1654 թթ. պատմությունը, որտեղ հեղինակը նկարագրված իրադարձությունների անմիջական մասնակիցն է։

Եվ որպեսզի տեսնենք, թե ինչ աստիճանի սերտություն ունեն այս երկու պատմական գործերը, ինչ կերպ, ինչ երանգով է օգտագործված «Ֆեզլեբե»-ն Քյոմուրճյանի կողմից «Պատմութիւն համառօտի...» մեջ, դիմենք համեմատվող օրինակներին²¹։

¹⁷ Գահակալությունը

¹⁸ Ձեռ., էջ 3ա։

¹⁹ Kâtip Çelebi, Fezleke-i Kâtip Çelebi, Istanbul, mat. Ceride-i Havadis, cilt-1, 1869s, (412s); cilt-2, 1870s, (338s).

²⁰ А. А. Папазян, «Джихан Нюма» и «Фезлеке» Кятиба Челеби как источник по истории Армении (XVII в.), Ереван, 1973, стр. 42.

²¹ Քյոմուրճյանը Ֆեզլեբեից օգտվելիս պահպանել է տեղմիջների և անունների թուրքական ձևերը։ Մենք ևս երկու գործերի կապն ու սերտությունն ընդգծելու համար, համապատասխանող տեքստերը թարգմանելիս, պահպանեցինք անունների, բառերի թուրքերեն արտահայտությունները՝ տողատակ տալով դրանց հայերեն թարգմանությունը կամ բացատրությունը։

Յեզլեքե

Նույն տարվա (1008—1599 թ.) Շեմվալ ամսին սիփահինների մի խումբ խմբվելով և բռնելով որդու հետ Քերա անունով մի կնոջ, իբրև խառնակչի, տարան կայմակամ հալիլ փաշայի պալատը, և, այնտեղ դաշունահարելով, սպանեցին նրանց: Այդ օրերին բազմաթիվ բանաստեղծներ երգեցին հորինեցին:

հ. 1 էջ 128

Այս տարվա Զեմազիյեի Կալսըր (ամսին) նորին մեծությունն փառիշահը հրամայեց իսլամական երկրից բոլորովին վերացնելու օղին ու գինին՝ պատճառը հավատացյալների պառակտումների և շարիքների:

Kálb-i aşək gibi,

Viran it'diler mēyxanēi,

Bivēfaler ahdanē,

Deawderdiler p'ēymanēi²⁵;

Հարեցողներին կոտորեցին, շատերին էլ վտարեցին: Գինետները ավերեցին և հարյուր բեռ ակշի²⁶ հասնող

«Պատմութիւն համառօտ...»

Սիփահիք եէնիշէրիք,

Գայմագամին դարպասն

խմբեալ.

Հրէի կին մի հանդըգնեալ էր,

ի սուլթանաթն լինէր խառնեալ:

ի տիւան անդ խանչեօք,

Զորդին ընդ Քերան

ծակոտեցեալ.

Երգեցօղք և գրելով զերգս,

Հազար և յութ թուականն

հասեալ:

էջ 84 բ

Զպատճառ շարեաց գինի

օղւով,

Սուղ պատճառէ որ ցնա

յիշեալ.

Վընասուցն և շարութեան,

Նըկատեցին և հրամաեալ:

Մուգադա և էմանէթ,

Եւ թէ որքան ալ դրամ եկեալ.

Հզկեօմըրուկն²² և զալ կէլուրս²³,

Ոչ հոգային՝ ի բաց բարձեալ:

Մէմալիքի իսլամիէ²⁴,

Գինի ընդ ցալ մի երևեալ.

Կոտորեն զըրդուղս ֆուշովք,

Եւ աւարէ զծախօղսն առեալ:

Գալպ աշըք կիպի,

Վիրան իթտիլէր մէյխանէի,

²² keawmruk (geawmruk) — մաքս:

²³ kelur (gelur) — հասույթ, եկամուտ:

²⁴ mēmalik-i islamīe — իսլամական երկիր:

²⁵ Սիրահարի սրտի նման,

Ավեր դարձրին գինետները,

Ու պայմանին ուխտադրութ,

Շուռ տվեցին գինու զավր:

²⁶ akčē — արծաթյա մանրադրամ:

մութադդան²⁷ ու էմանեթը²⁸ վերացնելու հրաման տվեցին...

հ. 1, էջ 352

Պիվլեֆալէր ահտընէ,
Տեօնտէրտիլէր փէյմանէի:

էջ 95ա—95բ

Աթ մեյդանում²⁹ յոթ տարի շարունակ մեծ ջանախնդրությամբ կառուցվող սուլթան Ահմեդ խանի փառավոր շամիի³⁰ գմբեթի շինությունը ավարտվեց և, երբ եկավ շամիի դռները կախելու ժամանակը, Զեմադլիյե խնըր (ամսի) շորորդ օրը շամիի հրապարակում օթաքներ³¹ խփվեցին, և թահթիշահ³² դրվեց: Ամբողջ ուլեմայությունը³³, էրքյանի դեկեթը³⁴ և այլանի սուլթանաթը³⁵ հրավիրվեցին: Խնջույքը ավարտվելուց հետո, բոլորը գնացին սուլթանական պալատ, զգեստավորվեցին և փադիշահին առաջնորդեցին իր հարկաբաժինը: Նախ մեծ վեզիր Խալիլ փաշան յուր վեզիրներով մտավ փադիշահի առանձնասենյակը և շնորհավորեց շինության ավարտը, ապա շեյխուլիսլամը³⁶, բադմաթիվ ուլեմներ և պաշտոնյաներ մտնելով (ներս) համբուրեցին փադիշահի քղանցքը և, ստանալով

Իստամպուլ հմուտ արքայն,
Իւր նոր ճամին կամիր զընալ.
Ձոր եօթն ամօք շինեալ էին,
Որ յաթմէյտան լինի հըմեալ:
Երբ ասացին թէ թըմեցաւ,
Ձկուպղայսն ի դուռն կախել
գնալ

Հանդէպ ճամոյն զօթաղս
կազմեն,

Եւ թահթիշահ անդ
բարձրացեալ,

Համայն ուլէմա քաղաքին,
Եւ էրքեանի տէվլէթն խըմբեալ.
Եւ այլանի սատէթ պատրաստ,
Ըստ կարգի պատուոյ

տեղատրեալ:
Եւ համայնք ի ներքս մըտին,
Եւ յարքայէ զխիլաթ զգեցեալ.

Հազարաց շափու արանց,
Ձկապայս և զսօֆըս

վերարկեալ:

²⁷ muk'adda—գինու և օգու առևտրով զբաղվողներից միանվագ գանձվող հարկ:

²⁸ emanet'—գինու և օգու վրա դրված հարկը գանձող վարչություն:

²⁹ Al'meydan!—ընդարձակ տարածություն էր, որտեղ օսմանյան սուլթանները օրը օրը հավաքվում էին խոսվարար ենիչեբիներն ու սիփահիները:

³⁰ Jami'—մուսուլման հավատացյալների աղոթավայր, մզկիթ:

³¹ o'tak'—սենյակ, այստեղ՝ արքայական վրան:

³² t'axt'—šahl—արքայական աթոռ, գահաթոռ:

³³ ulema—կրոնավոր, գիտնական, իմաստուն անձնավորություն:

³⁴ erk'ean-i devlet'—«Պետության սյուններ», պետության բարձրատեղյակ պաշտոնյաներ:

³⁵ aynan-i sult'anat', պալատականներ:

³⁶ ševxulislam—կրոնական բարձրատեղյակ պաշտոնյա:

հաղարի շափ խիլաթ³⁷ և սոֆա³⁸, մեծարվեցին: Այնտեղ, նորին մեծության աջ կողմում, երկու շահադեններ³⁹ մուճեվեզով⁴⁰ կանգնած էին:

Ճ. 1, էջ 383

Նորքումբբ յօթադ արքային
գան,
Երեւելով երկրպագեալ.
Նախ վէզիրն վուզէրայիւր,
Ըզշնորհաւոր նրմա ասացեալ:
Եւ մուֆդին գուղաթ գնդովք,
Նախարարք որք կարգ կարգ
մըտեալ:
Ուր տեսին մուճէվէզովք,
Զերկ շահաւտէսն ընթեր
կանգնեալ:

էջ 101բ—102ա

Ինչպես տեսնում ենք, օսմանյան կայսրության ներքին կյանքին առնչվող այս համադրված փոքրիկ հատվածներն ունեն գրեթե բառացի նմանություններ: Հանդիպում են նաև ավելի ընդարձակ համընկնող, քաղաքոված կամ համառոտաբար վերաշարադրված, «չափու բերեալ» հատվածներ՝ կոնկրետ պատմական փաստերով, զերծ սկզբնաղբյուրի հեղինակի խոսքի զարդարանքներից ու ավելորդ թվացող մանրամասնություններից: Բերենք երկու ընդարձակ օրինակ:

Քանի որ Կարսի բերդը (աջեմի) շահի կողմից քանդվել էր, նպատակահարմար գտնվեց վերանորոգել այն և զինվորներ պահել: Կափուկուլիներին⁴¹ և բնյլերբելիներին⁴² տրամադրեցին զինվորներ, որոնք և մեկ շաբաթվա ընթացքում բերդը վերանորոգեցին այնքանով, որ հնարավոր լինի մի կերպ բնակվել: Բերդի պահպանություն հա-

Նաև զՂարս քաղաք շինեն,
Ի պահպանումն զօրս անդ
ածեալ.
Հասին ի դաշտն և Բէվանու,
Եւ զհող կուտելըն
պատրաստեալ:
Ի ցերեկի երբ զհող քըշեն,
Ըզհողն ի ցայգ ի ներքս
քարշեալ.

³⁷ xilat' (xalat') — արժեքավոր վերաբեկու, որով սուլթանը կամ մեծ վեզիրը մեծարում էին կայսրության հավատարիմ հպատակներին:

³⁸ sawf — բրդյա թանկագին կտոր:

³⁹ šahzade — շահի որդիներ, արքայորդի, թագաժառանգ:

⁴⁰ mučeveze — հագած-կապած, հանդերձավորված:

⁴¹ kap'ukull — դուռն ծառա, օսմանյան կանոնավոր բանակի զորամասերից, խաղաղ ժամանակ սուլթանին և մեծ վեզիրին ուղեկցող զորախումբ:

⁴² beylerbeyi — նահանգների կառավարիչ, որն օժտված էր վարչական ու զինվորական իշխանությամբ:

մար դինվորներ առանձնացնելով և
[պարիսպների վրա] թնդանոթներ տե-
ղադրելուց հետո, [բանակը] առաջ
շարժվեց և Ջեմադիյե-ախըր ամսի
կեսերին իշավ Երևանի դաշտավայրը:
Գիշերով խրամատներ փորվեցին, և
բերդը պաշարվեց⁴³: էմիր Գյուլնի խա-
նը նախապես այն ամրացրել էր և
լցրել վիլայեթի դինվորներով ու ռազ-
մամթերքով: Շահ Աբբասն էլ բանա-
կով նախիջևանում էր: Ռումելիական
թևում տեղադրելով՝ 4, ենիչերիների
թևում՝ 2, իսկ բերդի դարբասների դի-
մաց՝ 2 թնդանոթներ, թուրքերը քսան
օր բերդը ապարդյուն ումրակոծեցին:
Սկսեցին հող քշել և կուտակել: Ցե-
րեկը քշված և կուտակված հողը գի-
շերը (պաշարվածների կողմից) ներս
քաշվելով անհայտանում էր: Կեռերով
ներս էին քաշում նույնպես խանդակ-
ներ⁴⁴ նետված պարկերն ու դարարնե-
րը⁴⁵: Ի վերջո, իսլամական դինվորնե-
րը [օսմանյան բանակը] թաքին⁴⁶
հիմնեցին և թնդանոթներով պարիսպ-
ներում անցքեր բացելով բոլոր կողմե-
րից սկսեցին հարձակվել բերդի վրա:
Մազանդարանի թյուֆենկենտազները⁴⁷

և քսան աւուրքը շատ ծեծէին,
և անօգուտ էին խոնջեալ:
Շինեն օսմանցիք թապիէ,
և մեծ թօփովք զայն

ծակոտեալ.

Ի ծակոտեալ տեղոց հնարութ,
Բազում կողմանց ի ներքս

վազեալ:

Սուսերամերքքըն օսմանցիք,

Սէրտէնկէշտիս⁴⁸ ի մահ

դիմեալ.

Թուֆէնկէնտազ մազանտա-
րանք,

Սուրխիսէրանքըն⁴⁹ ճակատեալ:

Ու բազումք կոտորեցան,

Ենիշէրուց ազայն անկեալ.

Եւ խոցեալ Թիւրքէ պիւմէզն,

Եւ ալլքն անդուտ յետս

փախեալ:

էջ 100բ

⁴³ serdengeç-di—«գլխից ձեռք քաշած», այսպես էին անվանում օսմանյան բանա-
կում այն առաջատար խմբերը, որոնք առաջինն էին զորհում թշնամու վրա:

⁴⁴ surx-i seran — տղարմրազուխներ, ճիւղջլրաշներ:

⁴⁵ Իրան արշավող օսմանյան բանակը 1615 թ. պաշարում է Երևանի բերդը՝ շուրջ
երկու ամիս: Երևանի պաշտպանների հերոսական դիմադրությունը և վրա հասնող ձմռան
ցրտերը ստիպում են մեծ վեդիր Մուհամմեդ փաշային վերացնել պաշարումը և ծանր
կորուստներով նահանջել: (Ձեռ., էջ 100բ):

⁴⁶ xandak—պատնեշ, խրամ:

⁴⁷ țarar—քուրձ, պարկ:

⁴⁸ l'able—մաքակոց:

⁴⁹ l'ufenk'endaz—հրացանաձիգներ, հրացանավորներ:

պարսպի ետեւում թաքնվելով մարտըն-
չեցին, և նրանցից շատերը զոհվեցին:
Եվ երբ Ենիշեր աղա⁵⁰ Մոււլի աղան
մարտում սպանվեց, Թուրքչէ Բիւմեզն⁵¹
էլ վերավորվեց, իսլամի զինվորները
նահանջեցին:

Գ. 1, էջ 375

Սաֆեր ամսի 22-ին (9 օգոստոս,
1635 թ.)⁵² երկուշաբթի էր: Մուրադ
քեթխուդան⁵³ դուրս եկավ բերդից և
[հայտարարեց] Երևանը հանձնե-
լու մասին: Որոշվեց, որ էմիր Գյու-
նե օղլի Թահմասը Կուլի խանը իջնի
բերդից: Վսեմաշուք փադիշահը ստո-
րագրեց պայմանագիրը և իր մարդ-
կանցից մեկի հետ ուղարկեց [բերդ],
իսկ քեթխուդա Մուրադը մնաց այս-
տեղ: Հաջորդ օրը սիփահինների գնդերը
վրաններից դուրս եկան և զորակար-
գով շարվեցին [բերդի] դռան առջև:
Հիշյալ խանը դուրս եկավ բերդից, մո-
տենալով սուլթանին, համբուրեց աս-
պանդակը և բերդը հանձնեց: Այսպի-
սով նա արժանացավ սուլթանի ուշա-
դրությանը: Մեկ օր հետո սուլթանին
ժառայելու նրա խնդրանքին բավա-

Ձանձրացան պարսիկք ընդ այն,
Եւ ըզբաղաքն տալ յօժարեալ.
Զի քէտխուտայ խանին

Մուրատ,

Ել ի կլայէն⁵⁴ ցարքայ եկեալ:
Ի խանէն զպատգամ բերէ,
Խօստացայ քեզ զԵրևան տալ.
Ընդ որ զահտնամէ⁵⁵ գրեաց

արքայ,

Հրաման խանին յըղէ ի գալ:
Էմիր Կիւնէ խան օղլոյ խանն,
Առ թագաւորն ելնու ի գալ.
ԶԵրևան յանձնեալ ի նայ,
Զոտոս արքային անդ

համբուրեալ:

Որոյ զգեցոյց արքայ զխիւաթս,
Խանչէր⁵⁶ կամար սօրդու⁵⁷
տուեալ.

Ընդ առաջ արքային հետեակ,

⁵⁰ yeniçeri aṭasā—ենիշերինների պետ, հրամանատար:

⁵¹ i'urk'ē bilmez—թուրքերեն չիմացող: Քյոմուլեճյանը նրան հիշատակել է
շալալիների ցուցակում (Պատմութիւն..., էջ 89ա):

⁵² Այս անգամ Երևանի բերդը պաշարում է Մուրադ VI-ը դեպի Իրան արշավելիս:
Տասնօրյա ահեղ մարտերից հետո, Երևանի պաշտպանները, հետագա դիմադրությունը
գտնելով անիմաստ, հանձնում են բերդը:

⁵³ k'et'xuda—գործերի կառավարիչ, տնտեսավար:

⁵⁴ k'al'e—բերդ, ամրություն:

⁵⁵ ahdname—պայմանագիր, համաձայնագիր:

⁵⁶ xanč'er—գաջույն:

⁵⁷ sawrīuč—ձիու մագերից պատրաստված խուպուներ, որոնք զրգվելով ուսա-
ղերների եզրին, նշում էին կրողի բարձրաստիճանությունը:

բարութիւն տրվեց: Նրան [սուլթանը] նվիրեց թանկագին խիլաթ, դաշույն և ականակոտ սուր, բազմաթիվ նվերներ: Այնուհետև ենիշերինները մտան բերդ: Գիշերը հակառակորդի 5—6 հազար հրաձիգները Երևանի պաշտպան Միր Ֆեթթահօ օղլու հրամանատարութեամբ դուրս եկան բերդից և, իրենց հետ վերցնելով հնարավորութեան սահմաններում զենք ու կայք, հետիոտն և հեծյալ ուղևորվեցին դեպի Արդերիլ... Այնուհետև սուլթանի վրան հրավիրվեց Մուրթազա փաշան և սուլթանի հրամանով ստացավ Երևանի մուհաֆեզին⁵⁸ պաշտոնը:

Գ. 2, էջ 173

Համապատասխանաբար առաջարկում ենք համեմատել նաև Ք. Չելերիի «Ֆեզլեբեի» առաջին հատորի 136—138, 174—175, 188—192, 192—201, 211—219, 222—225, 292—294, 304—315, 382, 334—335, 339—340, 351—352, 355—356, 356—359, 361—362, 385—386, 390, 402—403, 403—412 և երկրորդ հատորի 3—14, 22—23, 24—28, 33—34, 38—47, 52—53, 66—69, 74—76, 79, 108—109, 114—116, 128—133, 139—144, 151, 154—156, 159—160, 162—163, 169, 170—176, 179—181, 187—188, 195—198, 214—215 էջերը Ե. Քյոմուրճյանի «Պատմութիւն համառօտ...»-ի՝ 83ա, 87ա, 84ա—84բ, 90բ, 92ա, 92բ, 94ա, 94բ, 95բ—96ա, 95ա, 101ա—101բ, 96ա, 101ա, 97ա—98բ, 96բ, 102ա—102բ, 104ա—104բ, 106ա—106բ, 107ա—110ա, 110ա—115բ, 115բ, 116ա, 116բ, 117ա—119բ, 120ա—120բ, 120բ, 120բ, 121ա, 121ա—121բ, 122ա—122բ, 122բ—123բ, 122բ—124ա, 125ա, 125ա, 126ա—126բ, 127ա, 127բ—126բ, 128բ, 129ա, 129բ—131բ, 131բ էջերի հետ:

Բերված համադրությունները, հղված էջերն, ինչպես և երկու գործերում նկարագրված իրադարձությունների հաջորդականության նույնությունն անառարկելիորեն վկայում են, որ «Ֆեզլեբեին» Ե. Քյոմուրճյանի երկի հիմնական աղբյուրներից մեկն է, որից նա օգտվել է լայնորեն: Սակայն Քյոմուրճյանը պատմական դեպքերը, փաստերը նկա-

նվիր Կինէ օղլին անկեալ:
Ի քաղաքն ըզնա հմոյծ,
Եւ ի տուն իւր զընթրիս
առեալ.
Հինգ վեց հազար պարսիկ
զօրօք,
Միր Ֆեթահօ օղլին եկեալ:
Ընդ կարօղացեալսըն
կապուտից,
Բստնան 'ւ յԱրտաիլ
զընացեալ.
Եւ Մուրթազայ փաշային տայ,
Մուհաֆէղէ Րէվան նըստեալ:
էջ 127բ—128ա

⁵⁸ muxafeze — պահապան, բերդապահ, կայազորի հրամանատար:

բազմելիս, սկզբնաղբյուրին հարազատ մնալով հանդերձ, սկզբունքային հետևողականություն է ցուցաբերել նյութերի ընտրության հարցում, որտեղ և դրսևորվել է նրա հեղինակային ինքնուրույնությունը:

Քյոմուրճյանին հետաքրքրել է առավելապես Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքական կյանքը: Նա սկզբնաղբյուրից օգտագործել է այն նյութերը, որոնք վերաբերում են ենիշերիների և սիփահիների խռովություններին, կայսրությունը հիմքից ցնցող ջալալիական շարժումներին, պալատական երկպառակություններին և հեղաշրջումներին, դիվանագիտական հարաբերություններին, Թուրքիայի ռազմական գործողություններին, թուրք-իրանական փոխհարաբերություններին և նրանց միջև մղվող երկարատև պատերազմներին, արևմուտք և արևելք արշավող թուրքական բանակներին օգնության շտապող Ղրիմի թաթար խաների ասպատակություններին: Քյոմուրճյանը ուշադրություն է դարձրել նաև լեհ-թուրքական փոխհարաբերությունների վրա: Նա սկզբնաղբյուրի հետևողությամբ շարադրել է 1621 թ., Թուլայի (Դնեպտրի) ափին գտնվող Խոտին ավանի շրջանում լեհերի ու թուրքերի միջև սկսված, այսպես կոչված, «խոտինի պատերազմը»⁵⁰:

Ե. Քյոմուրճյանը, ի դեպ, չի օգտագործել սկզբնաղբյուրում հղած քաղաքական կարևոր փաստաթղթերն ու պայմանագրերը, որոնց մասին թեև ակնարկում է: Քյոմուրճյանը չի օգտագործել նույնպես, իհարկե, Թուրքիայի քաղաքական պատմության համար կարևորություն չներկայացնող, սկզբնաղբյուրի՝ թուրք պետական պաշտոնյաների, հասարակական նշանավոր գործիչների մասին կենսագրական նյութերը:

Քյոմուրճյանը սկզբնաղբյուրից օգտվելիս, ընդհանուր առմամբ, դիմել է քաղաքական մեթոդին: Հետևաբար, նա երբեմն սկզբնաղբյուրի նյութերը այնպիսի սեղմությամբ է համառոտագրել կամ խմբագրել, որ անհասկանալի և չպատճառաբանված են մնացել բազմաթիվ հետաքրքիր և արժեքավոր իրադարձություններ ու փաստեր: Այդպիսի դեպքերում Քյոմուրճյանը հանդես է եկել իբրև լոկ փաստն արձանագրող հեղինակ:

Ընդհանրապես ամբողջ աշխատության մեջ այս երևույթն իշխող է, և դա հավանաբար պետք է բացատրել հետևյալ հանգամանքով: «Պատմութիւն համառօտ...»-ը գրելով չափածո, հեղինակը, բնականաբար, չէր կարող հարցերին անդրադառնալ և քննարկել ամինայն մանրամաս-

⁵⁰ Տե՛ս Խոտինի պատերազմի մասին Փ. Ջելբի, Ֆելքս, հ. 1, էջ 404—422, հ. 2, էջ 3—5 և «Պատմութիւն համառօտ...», էջ 107—110ր:

նությամբ և խորությամբ, որովհետև երկի շափածո շարադրվածքը նրան այդպիսի հնարավորություն չէր կարող ընձեռել:

Հաճախ Քյոմուրճյանը, սկզբնաղբյուրին հետևելով հանդերձ, հեռացել է նրանից և լրացրել այն: Ջալալիների շարժման մասին խոսելիս, նա «ղչարան շարեօք» հիշատակում է ավելի քան 60 ջալալի ղեկավարների⁶⁰, որոնց մեկն ամբողջությամբ ընթ հանդիպում «Ֆեզլեքեում»: Եթե Կալենդեր օղլուի, Ջանփոլադի, Բավլիլի և շատ ուրիշների մասին մանրամասնությունները «Ֆեզլեքեում» և «Պատմութիւն համառօտ...»-ի մեջ համապատասխանում են՝ նույնիսկ բառացի, ապա Դելի-Հասանի՝ Թոխաթի վրա կատարած հարձակման մանրամասնությունները որոշակիորեն տարբերվում են⁶¹: Այս և այսպիսի բազմաթիվ փաստերից դժվար չէ նկատել, որ թուրք պատմագրությանը քաջածանոթ Ե. Քյոմուրճյանը տվյալ ժամանակաշրջանի համար իր հիմնական սկզբունքաղբյուրից բացի օգտագործել է այլ աղբյուրներ ևս:

Այսպիսով, ակնհայտ է «Ֆեզլեքեի» և «Պատմութիւն համառօտ...»-ի սերտ կապը, և ընդունելի է առաջինի ազդեցությունը: Այս անժխտելի իրողությունը, որը հաճախ է հանդիպում և՛ հայ, և՛ թուրք պատմագրության էջերում⁶², չի արժեքազրկում Ե. Քյոմուրճյանի աշխատությունը: Ե. Քյոմուրճյանը, հետևելով սկզբնաղբյուրին, այնուամենայնիվ պահպանել է պատմիչի իր ինքնուրույնությունը, որը դրսևորվել է հատկապես թուրք-իրանական պատերազմների, Հայաստանում դրանց հետևանքների մասին սկզբնաղբյուրի ծավալուն նկարագրությունները համառոտագրելիս:

Եվ վերջապես, պետք է նշել, որ, «Պատմութիւն համառօտ ԴՃ (400) տարույ օսմանցոց թագաւորաց» երկի համար սկզբնաղբյուր ընտրելով և օգտագործելով Ք. Չելեբիի «Ֆեզլեքե» երկհատոր պատմական աշխատությունը, Ե. Քյոմուրճյանը հանդիսանում է Թուրքիայի միջնա-

⁶⁰ Ձեռ., էջ 88ա—90ա:

⁶¹ Ձեռ., էջ 87ա—87բ:

⁶² Հայտնի է, որ Ք. Չելեբին «Ֆեզլեքեն» գրելիս ազատորեն օգտվել է իրեն նախորդող պատմիչների աշխատություններից (տե՛ս А. А. Папазян, „Джиханниюма“ и „Фезелеке“ Кятиба Челеби как источник по истории Армении Ереван, 1973, стр. 42), իսկ հետագայում, պատմագիր Նաիման, իր հերթին, «Ֆեզլեքեն» է օգտագործել իր պատմության („Tarih-i Naima“) մեջ՝ ղուլլոյն լրացումներով միայն (տե՛ս В. Д. Смирнов, Кучибей Гёчюрджинский и другие османские писатели XVII в. о причинах упадка Турции, Спб., 1873, стр. 13; նաև А. С. Тверитинова, Восстание Кара Языджи, Дели Хасана в Турции, Л., 1946, стр. 18.

գարյան պատմութիւնն այս ամենահաւաստի և կարեւոր սկզբնաղբրութիւն
արժեքաւորող ու գնահատող մեզ հայտնի առաջին հեղինակը:

Ж. М. АВЕТИСЯН

«ФЕЗЛЕКЕ» КЯТИБА ЧЕЛЕБИ ОДИН ИЗ ИСТОЧНИКОВ
«КРАТКОЙ ЧЕТЫРЕХСОТЛЕТНЕЙ ИСТОРИИ ОСМАНСКИХ
ЦАРЕЙ» ЕРЕМИЯ КЕМУРДЖИЯНА

Резюме

Сочинение армянского историка XVII века Еремия Кёмурджияна «Краткая четырехсотлетняя история османских царей» является ценным первоисточником по средневековой истории Турции.

В статье впервые обсуждается вопрос об источниках, упомянутых в сочинении Еремия Кёмурджияна. Сличением текстов выясняется, что исторический труд летописца Кятиба Челеби являлся одним из основных источников Е. Кёмурджияна за период 1595—1648 гг. Хотя Е. Кёмурджиян проявляет большую последовательность в отношении описанных в «Фезлеке» событий, тем не менее при этом ему удается сохранить самостоятельность историка.

Е. Кёмурджиян также является первым автором, который использовал в качестве источника «Фезлеке» Кятиба Челеби.